ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ Նիստ) կայացավ 2022թ. օգոստոսի 5-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան	Կոմիտեի նախագահ
Բաբկեն Ղալոյան	Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան	Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան	Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի	Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն՝ Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածով, 5-րդ հոդվածով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածով, 28-րդ հոդվածով և Կանոնակարգի այլ վերաբերելի հոդվածներով՝ օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **29.07.2022թ-ի «Լեռնային Արցախ»-«Վան» (ՊԼ-002) խաղի ժամանակահատվածում արձանագրված խախտումների վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Լեռնային Արցախ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Լեռնային Արցախ ՖԱ» ՍՊԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

2. **30.07.2022թ-ի «Փյունիկ»-«Արարատ» (ՊԼ005) խաղի ժամանակահատվածում դաշտի տեր ակումբի երկրպագուների կողմից արձանագրված խախտման վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Փյունիկ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 22-րդ կետը՝ «Փյունիկ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

3. **31.07.2022թ-ի «ԲԿՄԱ»-«Շիրակ» (ՊԼ-003) խաղի ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձության վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հարուցել կարգապահական վարույթ և ձեռնարկել դրանից բխող անհրաժեշտ գործողություններ:

4. **31.07.2022թ-ի «Ուրարտու»-«Արարատ-Արմենիա» (ՊԼ-004) խաղի ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ:**
   1) *դաշտի տեր թիմի երկրպագուների կողմից դեղին գույնի ծխի կիրառում.*
   2) *հյուր թիմի երկրպագուների կողմից մեկ հատ ճայթրուկի կիրառում.*

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

1) Հաստատված համարել «Ուրարտու» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «ՖԱ Ուրարտու ՄՀԿ» ակումբի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:
2) Հաստատված համարել «Արարատ-Արմենիա» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով Կանոնակարգի 40-րդ հոդվածի 24-րդ կետը՝ «Արարատ-Արմենիա Ֆուտբոլային Ակումբ» ԲԲԸ-ի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «Նկատողություն»:

5. **ՀՖՖ ՄԿԱ բաժինը FMS համակարգի միջոցով պարզել է, որ VBET ՀՊԼ 2022-2023 մրցաշրջանի մասնակից «Շիրակ» թիմի կազմում 31.07.2022թ-ի դրությամբ հայտավորված է եղել 15 ֆուտբոլիստ և չի ապահովվել հայտավորման ենթակա ֆուտբոլիստների նվազագույն քանակը:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հաստատված համարել «Շիրակ» թիմի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և հիմք ընդունելով ՊՖՄԱ կանոնակարգի 28-րդ հոդվածը և Կանոնակարգի 40-րդ հոդվածի 80-րդ կետը՝ «Շիրակ ՖԱ»-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով:

6. **24.07.2022թ-ի «ԲԿՄԱ»- «Լեռնային Արցախ» (ԸԽ-013) խաղի ժամանակահատվածում տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ:**

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց ՝

Հարուցել կարգապահական վարույթ և ձեռնարկել դրանից բխող անհրաժեշտ գործողություններ:

Կոմիտեի նախագահ՝ _____

անդամներ՝ _____

_____

_____

_____